պերին է վերապահուած Ֆրանսիայում բարձրատիճան եկեղեցականներին ինչպէս այս կամ պաշտօնի մէջ նշանակելու, այնպէս և նրանց հաստատութեան իրաւունքը: Իսկ այս հանգամանքը միանգամայն հակառակ է վերոյիշեալ դաշնագրութեան առաջ բերուած յօդուածների մտքին: Վերջերս դարձել է այս Ֆրանսիայում հրատապ խնդիրներից մէկը և Ֆրանսիական հասարակապետութիւնը օր առաջ ցանկանում է ազատուել պապականութեան դերիշխանութիւնից:

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Մարտի 9-ին (ն. տ.) Կենտերբերիում իւր մահկանացուն կնքեց անգլիացի նշանաւոր քարոզիչ և աստուածաբանական գրքերի հեղինակ Ֆրեդերիկ Վիլիամ Ֆարրար 72 տարեկան, հասակի մէջ: Ֆարրար ծնուել է 1831 թ. Հնդկաստանի Բոմբէյ քաղաքում: Պատանի Ֆարրարը իւր հօր հետ անցնում է Անգլիա, որտեղ իւր բարձրագոյն կրթութիւնն աւարտելուց յետոյ, նուիրում է իրեն հոգևոր կոչմանը և աշխատում է այդ ասպարիզում: 1857 թուին ձեռնադրուում է քահանայ և շուտով մեծ հռչակ է ստանում, իբրև նշանաւոր քարոզիչ և հռետոր: Իբրև քարոզիչ նա վայելում է այնուհետև մեծ հեղինակութիւն ոչ միայն Անգլիայում, այլ նաև Անգլիայից դուրս ուրիշ քրիստոնեայ երկրներում:

Ֆարրարի գրաւոր երկասիրութիւններից նշանաւորներն են՝ Լեզուի ծագումը, Մարդու անկումը և ուրիշ քարոզներ, Յիսուսի կեանքը, Պօղոս առաքեալի կեանքն ու գործերը, Քրիստոնէութեան առաջին օրերը, Եկեղեցական հայրերի կեանքն ու գործերը ևն: Նրա աշխատութիւնների մեծագոյն մասը թարգմանուած են ռուսաց լեզուով, մի երկուսն էլ հայերէն: